

**ԽՍԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ  
ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Ցանկացած իրավական ինստիտուտի հետազոտության շրջանակներում համապարփակության ու բազմակողմանիության ապահովման պահանջի իրագործումն անխուսափելիորեն ենթադրում է ոլորտի իրավական խնդիրների վերհանում և լուծման ուղիների կանխորոշում՝ համապատասխան միջազգային իրավական չափանիշների, ինչպես նաև արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումների և առաջադեմ պրակտիկայի համեմատախրավական վերլուծության արդյունքների պարտադիր հաշվառմամբ: Կործում ենք, որ խմբային հանցավորության՝ որպես կրիմինալոգիական ուսումնասիրության օբյեկտի իրավական բովանդակության բացահայտման, դրա քրեախրավական կարգավորումների կրիմինալոգիական հիմնավորվածության ուսումնասիրությունն այս առումով բացառություն չէ, և վերջինիս գիտական բարձր արժեքը կարող է ապահովվել միայն միջազգային առաջադեմ պրակտիկայի և արտասահմանյան դոկտրինալ աղբյուրների վերլուծության արդյունքների համադրմամբ: Այսպես, համեմատախրավական ուսումնասիրության համար երկրների ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- ուսումնասիրված երկրները զարգացած իրավական համակարգ և կայուն իրավական արժեքներ ունեցող երկրներ են, որոնց քրեական օրենսդրության սկզբունքներն ու քրեական քաղաքականությունը հիմնված են կրիմինալոգիական իրողության վրա,

- համեմատական ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր իրավական ընտանիքներին պատկանող երկրների քրեական օրենսդրություններն ու դատական պրակտիկան: Մասնավորապես, ուսումնասիրվել են հարցի կապակցությամբ անգլոսաքսո-

---

<sup>1</sup> ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ս. Սիմոնյան:

նական (ընդհանուր իրավունքի) և ռոմանոգերմանական իրավական համակարգերի մոտեցումները, դրանց առանձնահատկությունները,

▪ վերլուծության առարկա են դարձել ամերիկյան և արևմտաեվրոպական երկրների քրեական օրենսդրությունները՝ նպատակ ունենալով ընդգծել այս ինստիտուտի կարգավորմանն ուղղված այլընտրանքային իրավական մոդելներն ու օրենսդրական լուծումները:

*«Դավադրության» հայեցակարգը (concept of conspiracy)՝ որպես անգլոսաքսոնական իրավական ինստիտուտ: Ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններն ու նախադեպային իրավունքի զարգացումն ընդհանուր իրավունքի երկրներում*

Անգլոսաքսոնական իրավական համակարգում որպես հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի հիմնական քրեաիրավական կառուցակարգ՝ իր ամրագրումն է ստացել մեր հայրենական քրեական օրենսդրությանը ոչ հայտնի «դավադրության» հայեցակարգը:

ԱՄՆ-ում այս ինստիտուտն իր օրենսդրական ամրագրումն է ստացել ֆեդերալ օրենքով, սակայն դրա բովանդակության և կիրառման սահմանների հստակեցումը տրվել է նախադեպային իրավունքի և դատական մեկնաբանությունների զարգացման արդյունքում: Այսպես, ֆեդերալ օրենքի 371 հոդվածն պատասխանատվություն է սահմանում երկու կամ ավելի անձանց կողմից համաձայնության ձեռքբերման համար, որը նպատակ է հետապնդում կատարել Միացյալ Նահանգների դեմ ուղղված ցանկացած հանցանք կամ խաբեություն (defraud): Ի լրումն այս ընդհանուր կանոնի՝ ֆեդերալ օրենքով ամրագրված են նաև որոշակի հանցագործությունների կատարմանն ուղղված հանցավոր համաձայնությունները (օրինակ՝ հակամրցակցային գործողությունների, սպորտային իրադարձությունների շրջանակներում կաշառակերության, անձանց քաղաքացիական իրավունքների սահմանափակման շուրջ հանցավոր համաձայնությունները):

Միացյալ Թագավորությունում դավադրության ինստիտուտի կարգավորման օրենսդրական հիմքերն իրենց ամրագրումն են ստացել Քրեական իրավունքի ակտում (Criminal Law Act), որով

քրեորեն պատժելի է համարվում այլ անձի (անձանց) հետ հանցավոր համաձայնության ձեռքբերումը<sup>1</sup>:

«Դավադրության» հայեցակարգի օրենսդրական ամրագրման, ինչպես նաև դրա կիրառման նախադեպային պրակտիկան կանխորոշել են այս ինստիտուտի երկու պարտադիր բաղադրիչների միաժամանակյա առկայության պահանջը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է համաձայնության առկայությանը՝ որպես արարքի օբյեկտիվ հատկանիշ (actus reus) և հանցանք կատարելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու դիտավորությանը՝ որպես արարքի սուբյեկտիվ հատկանիշ (mens rea): Ընդ որում, այս երկու տարրերի սահմանազատումը «դավադրության» հայեցակարգի կիրառման շրջանակներում այնքան էլ միանշանակ չէ այնքանով, որքանով համաձայնության ձեռքբերումը՝ որպես արարքի օբյեկտիվ հատկանիշ, ըստ էության մտավոր գործընթաց է ենթադրում<sup>2</sup>:

Ի տարբերություն Միացյալ Թագավորության նախադեպային իրավունքով ձևավորված դավադրության հայեցակարգի երկու պարտադիր տարրերի առկայության պահանջին ԱՄՆ քրեական արդարադատությունը պարտադիր է համարում նաև երրորդ բաղադրիչի առկայությունը՝ մասնակիցների կամ նրանցից մեկի կողմից դավադրության նպատակի իրագործմանն ուղղված գործողությունների կատարումը<sup>3</sup>:

### *1) Համաձայնության առկայությունը.*

Դավադրության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող պարտադիր հատկանիշը, ըստ անգլոսաքսոնական նախադեպային իրավունքի, *հանցանք կատարելու վերաբերյալ կայացված համաձայ-*

---

<sup>1</sup> Հատկանշական է, որ դավադրության անգլոսաքսոնական դոկտրինայում անձանց բազմաթվության (երկու կամ ավելի անձանց մասնակցության) պահանջը բավարարված չի համարվում, եթե դավադրության միակ մասնակիցներն ամուսիններ են: Միացյալ Նահանգներում այս պահանջի սահմանափակում նախատեսվում է նաև այն դեպքերում, երբ հանցանքի բնույթն անխուսափելիորեն ենթադրում է առնվազն երկու անձանց մասնակցություն:

<sup>2</sup> See **D. Ormerod, Smith & Hogan Criminal Law**, 11th edn.(2005), էջ 374, M. Allen, *Textbook on Criminal Law*, 9th edn (2007), էջ 276:

<sup>3</sup> Ամերիկյան նախադեպային իրավունքում այս տարրն անվանվում է «overt act»:

*նությունն է:* Այդպիսի համաձայնության ձեռքբերումն է, որ հանդես է գալիս իբրև հանցավոր մտադրության առարկայացում, այսինքն՝ քրեորեն պատժելի արարք:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, նման համաձայնության ձեռքբերման համար միայն բանակցությունների վարումը բավարար չէ: Անհրաժեշտ է, որ հանցակիցներն առնվազն համաձայնեցնեն դավադրության օբյեկտի հիմնական տարրերը, այդ թվում՝ ցանկալի հետևանքների առաջացումը<sup>1</sup>:

«United States v. Milligan» գործով դատարանը նշել է, որ հանցակիցները պետք է համաձայնություն ձեռք բերեն միասնական նպատակի շուրջ: Ընդ որում, դատարանը հավելել է, որ թեև պաշտոնական կամ ֆորմալ համաձայնություն չի պահանջվում, այդուհանդերձ դավադրության օբյեկտիվ կողմի առկայությունը ենթադրում է առնվազն լռելյայն համաձայնություն: Այս առումով, դավադրության օբյեկտիվ կողմի բացահայտման համար կարևորություն է ներկայացնում նաև «միասնական նպատակ» հասկացության պարզաբանումը: Այսպես, ամերիկյան նախադեպային իրավունքը սահմանում է, որ դավադրության հայեցակարգի շրջանակներում համաձայնության ձեռքբերումը կարող է իրականացվել նաև հանցավոր չհամարվող հակաիրավական արարքի կատարման շուրջ: Մինչդեռ, դատարանները դավադրության դեպքերը քննելիս ձեռնպահ են մնում քննարկվող ինստիտուտի այդչափ լայն մեկնաբանությունից՝ դրա կիրառության շրջանակները սահմանափակելով միայն այն դեպքերով, երբ դավադրության վերջնանպատակն ինքնին քրեական օրենքով արգելված արարքի կատարումն է<sup>2</sup>:

*2) Գիտակցական և կամային չափանիշների առկայությունը.*

Դավադրության համար անձին պատասխանատվության ենթարկելու հարց կարող է առաջանալ, եթե վերջինս գիտակցել է այդպիսի դավադրության բնույթը և կամովին է միացել դրան՝ նպատակ

---

<sup>1</sup> Տե՛ս **A. Maljevic**, ‘Participation in a Criminal Organisation’ and ‘Conspiracy’: Different Legal Models Against Criminal Collectives (2011), էջ 81, M. Allen, Textbook on Criminal Law, 9th edn. (2007), էջ 276, A. Ashworth, Principles of Criminal Law, 5th edn. (2006), էջ 461, **C.M. V. Clarkson & H. M. Keating**, Criminal Law: Text and Materials, 5th edn. (2003), էջ 513, J. Herring, Criminal Law: Text, Cases and Materials, 3rd edn. (2008), էջ 799-800:

<sup>2</sup> Տե՛ս **W.R. La Fave**, Criminal Law, 4th edn.(2003), էջ 639:

ունենալով մասնակցել համաձայնեցված արարքների կատարմանը<sup>1</sup>: Գիտակցական և կամային հատկանիշների բովանդակային առանձնահատկությունների որոշակիացումն ու հետագա զարգացումն ապահովվել են նախադեպային մեկնաբանությունների շնորհիվ: Դատական նախադեպերի ընդհանրացումը հարավորություն է տվել վեր հանել այն հիմնական չափանիշները, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա են պարզաբանման դավադրության մասնակցի քրեական պատասխանատվության հարցը որոշելիս<sup>2</sup>:

Հանցավոր համաձայնության գիտակցական չափանիշի վերաբերյալ ամերիկյան նախադեպային իրավունքում, մասնավորապես, նշվել է, որ կամավոր չեզոքությունը (willful blindness)՝ որպես դավադրության սուբյեկտիվ հատկանիշ, բավարար է, եթե անձը գիտակցել է հնարավոր դավադրության առկայության փաստը՝ խուսափելով վերջնական համաձայնեցումից: Այլ կերպ ասած, դավադրության մասնակցի մեղքի բացակայության մասին կարող է վկայել բացահայտ և գիտակցված ժխտումը, բայց ոչ դիտավորյալ չեզոքությունը (անտարբերությունը): Միննույն ժամանակ, հանցավոր համաձայնության առկայության և դրա նպատակների մասին իմացությունն ինքնին բավարար չէ դավադրությանն անձի մասնակցությունը հավաստելու համար. անհրաժեշտ է, որ անձը «որոշակիորեն նպաստի համատեղ գործունեությանը, դրավերջնարդյունքին հասնելու հարցում մասնաբաժին ունենա կամ հաստատուն փորձեր կատարի դրա նպատակների իրագործման ուղղությամբ»<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է հանցավոր համատեղ գործունեությանը մասնակցության կամային չափանիշին, ամերիկյան նախադեպային իրավունքում այն ենթադրում է անձի կողմից համատեղ գործունեության կամավոր ներգրավում դրա հանցավոր բնույթի գիտակցմամբ: Միաժամանակ, նման գիտակցումն ամեննին չի պահանջում, որ անձը տիրապետի իրականացվելիք հանցավոր արարքի բոլոր մանրա-

---

<sup>1</sup> St´u **G. E. Dix, M. M. Sharlot**, Criminal Law, 4th edn. (1999), էջ 372, ինչպես նաև W. R. La Fave, Criminal Law, 4th edn.(2003), էջ 628–629:

<sup>2</sup> St´u United States v. Ceballos, United States v. Falcone, Direct sales v United States դատական գործերը: Մեջբերումն ըստ Juliet R. Amenge Okoth, The Crime of Conspiracy in International Criminal Law, The Hague, The Netherlands, 2014, էջ 29:

<sup>3</sup> St´u նույն տեղում, էջ 30:

մասներին կամ բոլոր դրվագներով ունենա անմիջական մասնակցություն<sup>1</sup>: Մրան հակառակ՝ բրիտանական դատական պրակտիկան քննարկվող հարցի առնչությամբ առավել խիստ չափանիշներ է սահմանել: Այսպես, ըստ բրիտանական իրավական դոկտրինայի՝ դավադրության նպատակի հիմնական հանցանքի կատարմանն առնչվող փաստերի և հանգամանքների իմացությունը՝ որպես դավադրության սուբյեկտիվ հատկանիշ, ենթադրում է, որ այդպիսի հանգամանքներն ամբողջությամբ ընդգրկված են եղել հանցակցի դիտավորության մեջ կամ վերջինս գիտակցել է դրանց առկայությունը հիմնական հանցանքը կատարելիս<sup>2</sup>: Ավելին, մի շարք գործերով բրիտանական դատարանները արտահայտել են իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ հիմնական հանցանքի կատարմանն առնչվող որևէ փաստի կամ հանգամանքի չիմացությունը բացառում է դավադրության համար անձի պատասխանատվությունն անգամ այն պարագայում, երբ այդ հանգամանքը հիմնական հանցանքի պարտադիր հատկանիշ չէ<sup>3</sup>:

*3) Հանցավոր համաձայնության օբյեկտի իրագործմանն ուղղված ակտի առկայությունը*

Նախադեպային իրավունքի ընդհանուր մոտեցման համաձայն՝ դավադրությունը քրեորեն պատժելի է՝ անկախ դրա իրագործմանն ուղղված գործողությունների փաստացի կատարման: Չնայած այս ընդհանուր կանոնի՝ ԱՄՆ օրենսդրությամբ հանցավոր համաձայնության օբյեկտի իրագործմանն ուղղված ակտի կատարումը համարվում է պարտադիր: Այսպիսի պահանջի նպատակը, ըստ դատական նախադեպային պրակտիկայի, այն բանի հավաստումն է, որ հանցավոր դավադրությունն իրագործելի է<sup>4</sup>: Մինևույն ժամանակ, քննարկվող պահանջի բավարարման տեսանկյունից ամենևին պարտադիր չէ, որ այդ գործողությունները լինեն անօրինական կամ վերջնանպատակ հանդիսացող հանցավոր արարքի օբյեկտիվ կողմի մաս, այլ ընդամենն իրենցից պետք է ներկայացնեն հանցավոր նպա-

<sup>1</sup> Տե՛ս United States v. Eremeթատական գործը, մեջբերումն ըստ Juliet R. Amenge Okoth, նույն աշխատությունը, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս **A. Ashworth**, Principles of Criminal Law, 5th edn. (2006), էջեր 462–463, D. Ormerod, Smith & Hogan Criminal Law, 11th edn. (2005), էջ 377–381:

<sup>3</sup> Տե՛ս **Juliet R.** Amenge Okoth, նույն աշխատությունը, էջ 18:

<sup>4</sup> Տե՛ս **D. Burgman**, 29 DePaul L. Rev. (1979), էջ 101:

տակի իրագործմանն ուղղված քայլեր: Ընդ որում, նման գործողությունների կատարումը հանցակիցներից թեկուզ միայն մեկի կողմից բավարար պայման է դավադրության բոլոր մասնակիցներին պատասխանատվության ենթարկելու համար:

Դավադրությունն անգլոսաքսոնական իրավական համակարգում պատժվում է իբրև ինքնուրույն հանցակազմ՝ չլիանվելով այդպիսի համաձայնության օբյեկտ հանդիսացող հանցանքի հատկանիշներով: Այլ կերպ ասած, նման դեպքերում անձը պատասխանատվության է ենթարկվում հանցագործությունների համակցության (դավադրության և հիմնական հանցանքի) համար: Մրա հետ կապված, ԱՄՆ դատական նախադեպերում քննարկման առարկա է դարձել պատասխանատվության այս կանոնի կիրառման իրավաչափությունը կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահպանման համատեքստում: Այսպես, «Pereira v. United States» գործով դատարանը եզրահանգել է, որ համակցված պատժի նշանակումը (cumulative sentencing) չի խախտում կրկնակի դատապարտման արգելքն այն հիմնավորմամբ, որ դավադրությանը և դրա արդյունքում կատարված հանցանքին ներկայացվող իրավական պահանջները, ինչպես նաև դրանց ապացուցողական շրջանակները տարբեր են<sup>1</sup>: Կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի հետ կապված խնդիրները բրիտանական իրավակիրառ պրակտիկայում ևս փոփոխությունների հիմք են ծառայել: Մասնավորապես, Իրավունքի բարեփոխումների կոմիտեն (Law Reform Commission) կրկնակի դատապարտման պրակտիկայի հնարավոր սահմանափակ կիրառության նպատակով սահմանել է կանոն, համաձայն որի՝ մեղադրանքի կողմը պարտավորվում է յուրաքանչյուր դեպքում ապացուցել դավադրության և հիմնական հանցանքի կատարման համար համակցված պատժի կիրառության արդարացիությունը: Նման պատժի կիրառումն արդարացված կարող է համարվել, եթե դատարանի հանգի հետևության առ այն, որ դա պայմանավորված է եղել արդարադատության շահով<sup>2</sup>:

<sup>1</sup> St' u **V. J. Tatone**, 61 Journal of Urban Law (1984), էջ 505:

<sup>2</sup> **Juliet R. Amenge Okoth**, The Crime of Conspiracy in International Criminal Law, The Hague, The Netherlands, 2014, էջ 23:

Հաշվի առնելով այն, որ դավադրության անգլոսաքսոնական հայեցակարգը որպես քրեակիրական գործիք, կիրառվում է նաև կազմակերպված հան-

«Դավադրության» հայեցակարգն անգլոսաքսոնական իրավական համակարգում դրան տրված մեկնաբանման և կիրառման պայմաններում, սակայն, միանշանակ չի ընկալվում իրավաբանական գրականության մեջ: Այսպես, գիտական ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա է դարձել ընդհուպ մինչև այդ ինստիտուտի՝ իբրև քրեաիրավական ներգործության միջոցի առկայության տրամաբանությունն այն հիմնավորմամբ, որ հանցանք կատարելու կապակցությամբ համաձայնության ձեռքբերման փաստն ինքնին դեռևս սոցիալական վտանգավորություն չի ներկայացնում<sup>1</sup>:

Դրան հակառակ, ի հիմնավորումն ընդհանուր իրավունքի համակարգերում քննարկվող հայեցակարգի՝ որպես ինքնուրույն հանցակազմի գոյության հիմնականում երկու հանգամանքներ են մատնանշվում<sup>2</sup>: Դրանցից առաջինը, այսպես կոչված, «վաղ միջամտության» կամ նախականիման հիմնավորումն է (early intervention rationale): Հանցավոր արարք կատարելու կապակցությամբ համաձայնությունն արդեն իսկ պոտենցիալ վտանգ է ներկայացնում այնքանով, որքանով օրինաչափորեն ենթադրում է հանցավոր նպատակի փաստացի իրագործում: Բացի այդ, դավադրությունը կարևոր դերակատարություն կարող է ունենալ հանցավոր ընկերակցությունների դեմ պայքարում՝ ելնելով այն կանխավարկածից, որ հանցավոր գործունեություն ծավալելու նպատակով ստեղծված ցանկացած խումբ հասարակության համար շարունակական վտանգ է ներկայացնում:

Հենց այս «վաղ միջամտության կամ կանխման» հիմնավորումն է առավելապես ընկած ընդհանուր իրավունքի երկրներում դավադրության ինստիտուտի ձևավորման ու զարգացման հիմքում: Այսպես, դավադրության և հանցափորձի իրավական խնդիրներին նվիրված իր զեկույցներից մեկում Իրավունքի կոմիտեն<sup>3</sup>, մասնավոր-

---

ցավորության դեմ պայքարի շրջանակներում՝ թերևս կարելի է ենթադրել, որ կրկնակի խիստ պատժի կիրառումն արդարացնող դեպքերը հենց վերաբերում են անձանց կայուն հանցավոր գործունեության դեմ պայքարին:

<sup>1</sup> Տե՛ս **A. Ashworth**, *Principles of Criminal Law*, 5th edn. (2006), էջ 455–460, **C. M. V. Clarkson & H. M. Keating**, *Criminal Law*, 5th edn. (2003), էջեր 504–508:

<sup>2</sup> **Juliet R. Amenge** Okoth, նույն աշխատությունը, էջ 38:

<sup>3</sup> Միացյալ Թագավորությունում Իրավունքի կոմիտեն «Law Commission Act» 1965-ի հիման վրա ստեղծված անկախ մարմին է, որի հիմնական նպատակն



րապես, նշել է, որ դավադրության՝ որպես ինքնուրույն հանցագործության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այն քրեական իրավունքին հնարավորություն է տալիս միջամտել վաղ փուլում՝ մինչև ենթադրվող հանցանքի փաստացի կատարումը<sup>1</sup>:

Դավադրության հայեցակարգի այս հիմնավորումը տեղ է գտել նաև ԱՄՆ դատական նախադեպերում: Օրինակ, «United States v. Feola» գործով դատարանը նշել է, որ վաղ նախականիումն ու հետապնդումն արդարացված են եղել՝ հաշվի առնելով հանցանքի կատարման բարձր հավանականությունն այն փաստի ուժով, որ կողմերի միջև ձեռք է բերվել հանցավոր համաձայնություն<sup>2</sup>:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, քննարկվող վաղ կանխման հիմնավորումը միանշանակ չի ընկալվում իրավաբանական դոկտրինայում: Այսպես, գրականության մեջ կարծիք է արտահայտվել առ այն, որ հանցավոր համաձայնության դեմ պայքարի քրեաիրավական միջոցները, որոնք ապահովում են քրեական պատասխանատվությունը հիմնական հանցանքի (կախված հանցանքն ավարտին հասցնելու կամ հանցանքի կատարմանն անձի մասնակցության բնույթից՝ նաև դրա փորձի կամ հանցակցության) համար, լիովին բավարար են թվում<sup>3</sup>:

Դավադրության ինստիտուտի կիրառման հաջորդ հիմնավորումն այսպես կոչված «խմբային վտանգի» տեսությունն է: Այս տեսության տրամանաբանության հիմքում ընկած հիմնական գաղափարը թերևս հետևյալն է. հանցավոր ընկերակցության գոյությամբ իսկ հասարակությանը շարունակական վտանգ է սպառնում, որը կարող է մեծ ծավալների հասնել<sup>4</sup>: Հասարակությանը սպառնացող

---

է օրենքների վերլուծությունն ու մեկնաբանությունը, դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

<sup>1</sup> Տե՛ս Law Commission report no. 76, կետ 1.5 <http://www.bailii.org/ew/other/EWLC/1976/76.pdf>

<sup>2</sup> Տե՛ս «United States v. Feola» դատական գործը: Մեջբերումն ըստ R. Amenge Okoth, նույն աշխատությունը, էջ 39:

<sup>3</sup> Տե՛ս **A. Ashworth**, Principles of Criminal Law, 5th edn. (2006), էջ 458–459, C. M. V. Clarkson & H. M. Keating, Criminal Law, 5th edn. (2003), էջ 507:

<sup>4</sup> Տե՛ս **A. Ashworth**, նույն աշխատությունը, էջ 455, 458, D. Omerod, Smith & Hogan: Criminal Law, 11th edn. (2005), էջ 399:

նման վտանգի արագ շարժընթացն իր հերթին պայմանավորվում է հետևյալ գործոններով՝

- հանցավոր խումբը անձի մոտ զարգացնում է ապակառուցողական կողմնորոշումներ,

- հանցավոր խմբերն ամենայն հավանականությամբ դրսևորում են ծայրահեղական վարքագիծ,

- համեմատաբար ավելի դժվար է խմբին զերծ պահել հանցավոր գործունեություն ծավալելուց,

- հանցավոր գործունեության ծավալումը անձանց խմբի կողմից նպաստում է վերջիններիս մասնագիտացմանը՝ հանցավոր նպատակին հասնելուն ուղղված առավել արդյունավետ միջոցներ ձեռնարկելու հարցում,

- հանցավոր գործունեության մասնագիտացումը ենթադրում է մի շարք անձանց ներգրավվածություն, ինչը, իր հերթին, դժվարացնում է կազմակերպման և ղեկավարման գործառնություններ իրականացնողների անհատական քրեական պատասխանատվության ապահովումը<sup>1</sup>:

«Խմբային վտանգի» տեսության դրույթները, սկզբնական շրջանում կիրառություն ունենալով հանդերձ, ժամանակի ընթացքում քննադատական վերաբերմունքի արժանացան Միացյալ Թագավորության դատական մարմինների կողմից: Ներկայում դատարանները դավադրության ինստիտուտի կիրառման հարց բարձրացնելիս այն հիմնավորում են առավելապես նախադեպային իրավունքի ուժով դրա գոյությամբ՝ ձեռնպահ մնալով խմբային վտանգի տեսության դրույթներին հղում անելուց<sup>2</sup>: Դատական պրակտիկայի նման մոտեցումը այն է, որ այս տեսությունը դավադրության բովանդակությունը բացահայտում է ոչ այնքան հանցակիցների միավորման վտանգավորության, որքան դրա պատճառած վնասի տեսանկյունից: Նման քննադատական մոտեցում, մասնավորապես, դրսևորվել է «Regina v. Withers» գործում, որում արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ *թեև խմբի կողմից կատարված որոշ արարքներ կարող են էական վնաս պատճառել հասարակությանը, սակայն*

---

<sup>1</sup> St' u Law Commission report no. 76, կետ 1.6:

<sup>2</sup> St' u **A. Ashworth**, Principles of Criminal Law, 5th edn. (2006), էջ 458, C. M. V. Clarkson & H. M. Keating, Criminal Law, 5th edn. (2003), էջ 507:

*խմբի կողմից հանցանքի կատարման փաստն ինքնին օրինաչափորեն չի ենթադրում, որ կատարվածն ավելի վտանգավոր է, քան հանցանքը միանձնյա կատարելու դեպքում<sup>1</sup>:*

Մրան հակառակ, «խմբային վտանգի» տեսության դրույթները կիրառվում են ԱՄՆ դատական պրակտիկայում: Այսպես, «*Krulewitch v. United States*»<sup>2</sup> գործով վճռում դատարանն արձանագրել է, որ *շատերի հնարավորությունները, ուժն ու ռեսուրսներն ակնհայտորեն ավելի վտանգավոր են և դժվար բացահայտելի, քան մեկ անձինը*: Խմբի պոտենցիալ վտանգն արտահայտվում է նաև նրանում, որ հանցավոր գործընկերությունը ունակ է իրագործել ավելի մեծ նպատակներ և հետևաբար, հանցավոր գործունեությունից հրաժարվելու հավանականությունն ավելի է փոքրանում: Մեկ այլ՝ «*United States v. Rabinowich*» գործում դատարանը նշել է, որ *հանցավոր խումբն ունակ է սովորեցնել և «կրթել» հանցակիցներին հետագա կայուն հանցավոր գործունեություն ծավալելու նպատակով*: Կամ, օրինակ, «*Callanon v. United States*» գործում, դատարանը դավադրության հայեցակարգի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ մասնավորապես նշելով, որ հանցավոր խմբի վտանգավորությունը չի սահմանափակվում միայն այդպիսի ընկերակցության ստեղծումը պայմանավորող հանցանքի՝ որպես վերջինիս առաջնային նպատակի կատարմամբ, այլ պայմանավորված է այն բարձր հավանականությամբ, որ խումբը ձեռնամուխ կլինի այլ՝ հանցավոր նպատակին չառնչվող արարքների կատարմանը<sup>3</sup>: Մինևույն ժամանակ, քննարկվող տեսությունը, ԱՄՆ դատական պրակտիկայում կիրառություն ունենալով հանդերձ, քննադատությունների է արժանացել կրիմինալոգիական հետազոտությունների շրջանակներում: Այսպես, որոշ հետազոտողներ քննարկման առարկա են դարձրել այն կանխավարկածի հիմնավորվածությունը, ըստ որի՝ խմբային վարքագիծը հասարակական ավելի մեծ վտանգ է ներկայացնում, քան միանձնյա գործունեությունը՝ վնաս պատճառելու

<sup>1</sup> Տե՛ս «*Regina v. Withers*» դատական գործը: Մեջբերումն ըստ R. Amenge Okoth, նույն աշխատությունը, էջ 40:

<sup>2</sup> Տե՛ս «*Krulewitch v. United States*» դատական գործը: Մեջբերումը նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս «*United States v. Rabinowich*» դատական գործը: Մեջբերումն ըստ R. Amenge Okoth, նույն աշխատությունը, էջ 41:

հավասարագոր Վճռականությամբ և մոտիվացիայով: Որպես հիմնական հակափաստարկ՝ հեղինակների կողմից նշվում է, թե այն հանգամանքը, որ հանցավոր նպատակի իրագործման նպատակով մի խումբ անձինք միավորում են իրենց ուժերը, դեռևս չի ենթադրում արարքի ավելի բարձր հանրային վտանգավորություն, քան հավասարագոր կամ նույնիսկ ավելի ծանր հանցանքի կատարումը մեկ անձի ջանքերի գործադրման արդյունքում<sup>1</sup>:

Այսպիսով, «դավադրության» հայեցակարգի՝ որպես հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի ինքնատիպ քրեաիրավական լուծման էության, դրա բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը բավարար հիմքեր է տալիս եզրակացնելու, որ դավադրության հայեցակարգի ամրագրման և հանցավոր համատեղ գործունեության դեմ նման քրեաիրավական միջոցի կիրառման առաջնային թիրախը հանցավոր համաձայնությունն է՝ որպես հասարակական անվտանգությանը սպառնացող պոտենցիալ վտանգ: Ընդ որում, հանցավոր նպատակի իրագործմանն ուղղված անձանց ջանքերի միավորման քրեաիրավական այդպիսի գնահատական տրվում է՝ անկախ այն հանգամանքից՝ դավադրության բոլոր մասնակիցներն են անմիջականորեն մասնակցել հիմնական հանցանքի կատարմանը, թե նրանցից միայն մեկը:

*«Դավադրության» հայեցակարգի կարգավորման առանձնահատկությունները մայրցամաքային իրավական համակարգի օրենսդրությամբ:*

Դավադրության հայեցակարգը՝ որպես անգլոսաքսոնական իրավական համակարգի ինստիտուտ, իր ոչ միանշանակ և լայն կիրառությամբ անհամատեղելի լինելով մայրցամաքային իրավական համակարգի հիմքում ընկած իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին, միայն մասնակի կարգավորում է ստացել քաղաքացիական իրավունքի օրենսդրություններում:

Այսպես, Գերմանիայում դավադրությունը, ի տարբերություն անգլոսաքսոնական իրավական համակարգի կարգավորումների,

---

<sup>1</sup> See **A. Ashworth**, *Principles of Criminal Law*, 5th edn. (2006), էջ 458, C. M. V. Clarkson & H.M. Keating, *Criminal Law*, 5th edn. (2003), էջ 507, A. Maljevic, 'Participation in a Criminal Organisation' and 'Conspiracy': Different Legal Models Against Criminal Collectives (2011), էջ 76-77:

ամրագրում ստանալով օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներում, առավելապես հանդես է գալիս որպես հանցակցության ձև, այլ ոչ թե ինքնուրույն հանցագործություն<sup>1</sup>: Ընդ որում, ինչպես բխում է քննարկվող ինստիտուտի օրենսդրական կարգավորման տառացի մեկնաբանությունից, հանցավոր համաձայնության ոչ բոլոր ձևերն են քրեորեն պատժելի: Այդպիսիք են համարվում հանցավոր համաձայնության միայն այն դեպքերը, երբ հանցակիցները համաձայնություն են ձեռք բերում հետագայում հանցանքը համատեղ կատարելու (համակատարում) կամ դրա դրդչության վերաբերյալ: Հատկանշական է, որ Գերմանիայի գերագույն դատարանն իր որոշումներից մեկում իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ օժանդակողների կամ օժանդակողների և կատարողների միջև ձեռք բերված համաձայնությունը չի պարունակում այդչափ լրջություն քրեական պատասխանատվություն առաջացնելու համար:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի կարգավորումներով ևս հանցավոր համաձայնությունն ինքնին քրեորեն պատժելի արարք չէ, սակայն այն իբրև քրեական պատասխանատվության անհրաժեշտ պայման, ուղղակիորեն նախատեսված է երկու հանցակազմերում:

Մասնավորապես, օրենսգրքի «*complot*» (դավադրություն) վերտառությամբ 412-2 հոդվածը, որն ըստ էության դավադրության հայեցակարգի ամրագրման յուրահատուկ մոդել է, քրեորեն պատժելի *դավադրությունը բնորոշում է իբրև երկու կամ ավելի անձանց միջև ձեռք բերված համաձայնություն համատեղ հարձակում կատարելու*

---

<sup>1</sup> Գերմանիայի քրեական օրենսգրքի 30 հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ պատասխանատվության է ենթակա այն անձը, ով կհամոզի կամ կդրդի մեկ այլ անձի կատարել հանցանք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում այն անձի համար, ով իր կամահայտնությունն է հայտնել կամ ընդունել է առաջարկը կամ համաձայնել է այլ անձի հետ համատեղ մասնակցելու հանցանքի կատարմանը կամ դրա դրդչությանը:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 30 հոդվածի քրեաիրավական ներգործությունը տարածվում է միայն «ֆելոնի» համարվող հանցանքների կատարման առնչությամբ ձեռք բերված համաձայնությունների վրա: Իսկ օրենսգրքի 12 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ֆելոնի» է համարվում այն հակաիրավական արարքը, որի համար նախատեսված է ազատազրկման ձևով պատիժ նվազագույնը մեկ տարի ժամկետով:

*վերաբերյալ, եթե այդ համաձայնությունն ի կատար է ածվել է երկու կամ ավելի արարքների փաստացի իրագործմամբ:* Ընդ որում, ավելի խիստ պատասխանատվություն է սահմանվում նույն արարքի համար, որը կատարվել է հանրային իշխանության ներկայացուցչի կողմից: Սույն հոդվածի իմաստով «հարձակում» է համարվում Հանրապետության ինստիտուտների կամ պետական տարածքի ամբողջականության դեմ ոտնձգող բռնությամբ զուգորդված մեկ կամ մի քանի արարքների կատարումը:

Մեջբերված իրավակարգավորումների համեմատական ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ նախ հանցանք կատարելու վերաբերյալ համաձայնությանը քրեախրավական գնահատական է տրվում միայն այն դեպքում, երբ փաստացի կատարվում է պետական համակարգի դեմ ուղղված ոտնձգությունը:

Իսպանիայի քրեական օրենսդրությամբ ևս հանցավոր համաձայնությունը քրեորեն պատժելի է ոչ որպես ինքնուրույն հանցագործություն, այլ կարգավորվում է չավարտված հանցագործությունների որակման կանոններով: Ընդ որում, դավադրությանը քրեախրավական գնահատական է տրվում միայն օրենսգրքով ուղղակիորեն սահմանված հանցակազմերում: Հատկանշական է, որ դրանց թվին են դասվում ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները<sup>1</sup>:

Իտալիայում հանցանքի կատարմանն ուղղված նախնական գործողություններն ընդհանրապես, հանցանք կատարելու վերաբերյալ համաձայնության ձեռքբերումը մասնավորապես, ինքնին քրեորեն պատժելի չեն, եթե քրեական օրենքով ուղղակիորեն այլ բան նա-

---

<sup>1</sup> Դավադրությունը պատժելի է նաև Իսպանիայի քրեական օրենսգրքով, եթե այն իրականացվել է հետևյալ հանցանքների կատարման նպատակով. սպանություն (հոդված 141), հարձակում (հոդված 151), առևանգում (հոդված 168), բռնությամբ զուգորդված կողոպուտ, շորթում, խարդախություն, յուրացում (հոդված 269), ակնհայտ հափշտակված գույք ձեռք բերելը (հոդված 304), թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ (հոդված 373), պետական դավաճանություն (հոդված 477), Թագի, հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործություններ (հոդվածներ 477, 548), հանրային ծառայողի նկատմամբ բռնություն (հոդված 553), ահաբեկչական գործողություններ (հոդված 579):

խատեսված չէ: Նման կարգավորման հիմքում ընկած հիմնավորումը թերևս այն է, որ դավադրությունը՝ որպես մտավոր գործընթաց, դեռևս որևէ վնաս չի պատճառում օրենքով պաշտպանվող շահերին: Ըստ Բոտսվայի քրեական օրենսդրության՝ միայն բացառիկ դեպքերում դավադրությունը կարող է քրեորեն պատժելի համարվել: Այդպիսի արարքների շրջանակը սահմանափակվում է պետության դեմ կատարված ոսնձգություններով (օրինակ՝ դիվերսիոն կամ հակազգային ընկերակցությունը, քաղաքական դավադրությունը, զինված խմբի ղեկավարումը կամ մասնակցությունը)<sup>1</sup>:

Մայրցամաքային իրավական համակարգում դավադրության հայեցակարգի կարգավորման հաջորդ առանձնահատկությունն այն է, որ հանցավոր համաձայնության նպատակի իրագործմանն ուղղված հանցանքի կամ դրա փորձի կատարմամբ հանցավոր համաձայնությունը կլանվում է հիմնական հանցանքով, և ինքնուրույն քրեաիրավական գնահատական է տրվում միայն կատարված հանցանքին: Նման իրավական կարգավորման հիմքում ընկած թերևս ընկած է այն տրամաբանությունը, համաձայն որի՝ եթե հանցավոր համատեղ գործողությունների արդյունքում հանցավոր նպատակը փաստացի իրագործվում է, այսինքն՝ օրենքով պաշտպանվող հիմնական արժեքը վտանգվում է, դավադրության համար առանձին քրեաիրավական ներգործության անհրաժեշտությունն այդպիսով վերանում է<sup>2</sup>: Նշված մոտեցման վերլուծությունից ստացվում է, որ դավադրության դեմ պայքարի քրեաիրավական միջոցները ըստ էության նույնական են չավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանող կարգավորումներին:

Միաժամանակ, մայրցամաքային քրեական օրենսդրությամբ դավադրության ինստիտուտի ամրագրումը քրեաիրավական պայքարի գործիք է ծառայում հանցավոր համատեղ հանցավոր համա-

---

<sup>1</sup> Հարկ է նշել, որ Բոտսվայի քրեական օրենսգիրքը համատեղ հանցավոր գործունեության դեմ պայքարի շրջանակներում ամրագրել է, այսպես կոչված, հանցանքի կատարման մեջ համատեղ աշխատող անձանց (Il Concorso di Persone Nel Reato) հայեցակարգը: Դրա քրեաիրավական կարգավորումները որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ըստ էության, բխում են հանցակցության ինստիտուտի ընդհանուր տրամաբանությունից:

<sup>2</sup> St' u **Juliet R. Amenge Okoth**, *The Crime of Conspiracy in International Criminal Law*, The Hague, The Netherlands, 2014, էջ 51:

ձայնության դեմ, որը չի ենթադրում կայուն հանցավոր գործունեություն: Այլ կերպ ասած, ի տարբերություն ընդհանուր իրավունքի երկրների, որտեղ դավադրության հայեցակարգը՝ որպես գործուն իրավական մեխանիզմ, կիրառվում է նաև կազմակերպված հանցավոր խմբերի դեմ արդյունավետ պայքարի ապահովման շրջանակներում, մայրցամաքային իրավական համակարգը այդպիսի կայուն հանցավոր խմբավորումների դեմ պայքարի այլ կարգավորումներ է նախատեսում՝ օրենսդրական ամրագրում տալով «հանցավոր ընկերակցությունների» տեսության («criminal association» rule) հիմնադրույթներին:

Այսպես, հանցավոր խմբերի դեմ պայքարի շրջանակներում Գերմանիայի օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանում զինված խմբեր, հանցավոր կազմակերպություններ և անարբեկչական կազմակերպություններ ստեղծելու, անդամակցելու, հավաքագրելու կամ դրանց գործունեությանն աջակցելու համար<sup>1</sup>: Քրեաիրավական այն նորմերի գործողությունը տարածվում է հանցավոր գործունեությանը մասնակցության դեռևս վաղ փուլերի նկատմամբ: Այս առումով, դրանք որոշակի ընդհանրություններ ունեն անգլոսաքսոնական իրավական համակարգի դավադրության ինստիտուտի հետ: Միննույն ժամանակ, վերը նշված քրեաիրավական կարգավորումները ենթադրում են ոչ թե երկու կամ ավելի անձանց ջանքերի պատահական գործադրմամբ հանցանքի կատարում, այլ առնվազն երեք անձանց մասնակցությամբ գործող կազմակերպվածության որոշակի աստիճան ունեցող կայուն խումբ: Հանցավոր գործունեության այս ձևերի դեպքում արդեն քրեական պատասխանատվություն է առաջանում ինչպես քննարկվող հոդվածներով, այնպես էլ փաստացի կատարած հանցավոր այլ արարքների համար:

Համատեղ հանցավոր գործունեության դեմ պայքարի քրեաիրավական միջոցների ամրագրման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Ֆրանսիայի օրենսգրքով տրված իրավական լուծումները:

Որպես հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի կանխարգելիչ միջոց՝ ֆրանսիական քրեական օրենսդրությունը պա-

---

<sup>1</sup> St´u Գերմանիայի քրեական օրենսգրքի 127-րդ, 129-րդ և 129a հոդվածները [http://www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html](http://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html)



տասխանատվություն է սահմանում հանցավոր ընկերակցությանը մասնակցության համար (association de malfaiteurs): Ֆրանսիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցավոր ընկերակցությունը ենթադրում է անձանց խմբի առկայություն կամ համաձայնության ձեռքբերում ծանր հանցանք կատարելու վերաբերյալ, որի համար սահմանվում է նվազագույնը հինգ տարի ազատազրկում: Ֆրանսիական օրենսդրությամբ հանցավոր ընկերակցությունների համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում որպես ինքնուրույն արարք՝ ընկերակցության կողմից կատարված այլ հանցանքներից անկախ: Այս պարագայում քրեական ներգործությունը տարածվում է ոչ այնքան հանցավոր համաձայնության ձեռքբերման, որքան ընկերակցության ստեղծման վրա: Ընդ որում, հանցանքի կատարումը կազմակերպված խմբի կողմից (որի հասկացությունն ըստ էության նույնն է հանցավոր ընկերակցությանը) մի շարք հանցակազմերում նախատեսված է իբրև ծանրացնող հանգամանք, իսկ որոշ ծանր հանցանքների կատարման նպատակով ստեղծված կազմակերպված խմբերին անդամակցությունը պատժվում է որպես ինքնուրույն հանցագործություն (օրինակ՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ցմահ ազատազրկմամբ պատժվող այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ խոշտանգումը կամ բարբարոսական գործողությունները կազմակերպված խմբի կողմից, թմրանյութերի արտադրության, ներմուծման, արտահանման, փոխադրման, առքուվաճառքի, ձեռքբերման կամ ապօրինի օգտագործման նպատակով կազմակերպված խումբ ստեղծելը կամ ղեկավարելը, եվգենիկական փորձերի կամ նմանակ մարդու ստեղծմանն ուղղված գործընթացի իրագործման նպատակով կազմակերպված խմբին անդամակցելը)<sup>1</sup>:

Խմբերի հանցավոր գործունեության դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման պահանջով պայմանավորված՝ Իսպանիայի քրեական օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում անօրինական ընկերակցություններ, հանցավոր կազմակերպություններ կամ հանցավոր խմբերի գործունեության համար<sup>2</sup>: Հանցավոր ընկե-

---

<sup>1</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 211-1, 211-2, 211-3, 214-4, 222-4, 222-34, 225-4-1:

<sup>2</sup> Իսպանիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 515-521, 570 bis, 570 ter:

րակցությունների գործունեությունն արգելող դրույթը ենթադրում է երկուսից ավելի անձանց (հանցավոր խմբի պարագայում՝ առնվազն երկու անձանց) հիերարխիկ կառուցվածք ունեցող միավորում, որը հետապնդում է քրեորեն պատժելի արարքներ կատարելու երկարաժամկետ նպատակ:

Ինչպես մայրցամաքային իրավական համակարգի մյուս երկրներում, Բտալիայում ևս հանցավոր կազմակերպությունների դեմ պայքարի քրեաիրավական կարգավորումները բխում են «հանցավոր ընկերակցությունների» տեսության ընդհանուր սկզբունքներից: Բտալիայի քրեական օրենսգրքով, մասնավորապես, ազատագրվման ձևով պատիժ է սահմանվում առանց թվային սահմանափակման հանցանքներ կատարելու նպատակով երեք կամ ավելի անձանց միավորման համար: Ընդ որում, քրեական պատասխանատվության առաջացման հիմքը ոչ այնքան հանցավոր համաձայնության ձեռքբերումն է (ինչպես դավադրության ինստիտուտի կարգավորումներով է), այլ այդպիսի համաձայնության արդյունքը՝ հանցավոր ընկերակցությունը: Համաձայն իտալական քրեական օրենսդրության՝ նման ընկերակցությունը, հստակ հիերարխիկ կառուցվածք չունենալով հանդերձ, պետք է ունենա մշտական բնույթ և ղեկավարվի բազմակի հանցանքներ կատարելու չկոնկրետացված ծրագրով:

*Հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը՝ որպես հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը բարձրացնող հանգամանք: Երկրների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները*

Խմբային հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական մոտեցումների ուսումնասիրության շրջանակներում հետաքրքրություն են ներկայացնում նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ հանցանքը համատեղ կատարելը՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու հետ կապված իրավակարգավորումները:

Այսպես, Գերմանիայի քրեական օրենսգրքով հանցանքի կատարումը մեկից ավելի անձանց կողմից՝ որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է միայն հետևյալ հանցակազմերում՝ երեխայի

շահագործումը<sup>1</sup>, բռնության կամ սպառնալիքի գործադրմամբ սեռական ոտնձգությունը և բռնաբարությունը<sup>2</sup>: Նման կարգավորումը թերևս հիմք է տալիս ենթադրելու, որ ըստ գերմանական օրենսդրի հանցանքի կատարմանը մեկից ավելի անձանց մասնակցությունը բոլոր դեպքերում չի ենթադրում հանրային վտանգավորության ավելի բարձր աստիճան: Ավելին, վերը նշված քրեաիրավական նորմերի համակցված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանցակազմի սուբյեկտային նման կազմին առանձին քրեաիրավական գնահատական տալիս (ավելի խիստ պատասխանատվություն սահմանելիս) գերմանական օրենսդրի կողմից հաշվի են առնվել այդ արարքների կատարման բռնի մոտիվացիան և անձի սեռական ազատության և անձեռնմխելիության՝ որպես վերը նշված հանցավոր արարքներով ոտնձգության ենթարկվող իրավական բարիքի բնույթը:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքում քննարկվող հարցին առնչվող իրավակարգավորումները ևս պայմանավորված են որոշակի օրինաչափություններով: Նախ մի խումբ անձանց կողմից հանցանքի կատարման որպես արարքի ծանրացնող հանգամանքի ամրագրումը հիմնականում սահմանափակված է միաբնույթ հանցանքներով: Այսպես, ըստ ֆրանսիական օրենսդրի՝ երկու կամ ավելի անձանց կողմից հանցանքի կատարումը ենթակա է առավել խիստ պատասխանատվության

- սեռական ոտնձգությունների (բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, որոնք կատարվել են տասնհինգ տարին չլրացած անչափահասի կամ հանցավորի համար ակնհայտ խոցելի անձի նկատմամբ՝ պայմանավորված վերջինիս տարիքով, հիվանդությամբ, տկարությամբ, ֆիզիկական կամ հոգեկան պակասություններով կամ հղիությամբ,

---

<sup>1</sup> Գերմանիայի քրեական օրենսգրքի 176a հոդվածը (երեխայի շահագործումը ծանրացուցիչ հանգամանքներում) պատասխանատվություն է սահմանում երեխայի շահագործման համար (ինչը, իր հերթին, բնորոշվում է իբրև 14 տարին չլրացած անձին սեռական գործողություններին ներգրավելը կամ իր հետ երեխային նման գործողություններին մասնակցելու թույլտվություն տալը), որը կատարվել է մեկից ավելի անձանց համատեղ մասնակցությամբ:

<sup>2</sup> Տե՛ս Գերմանիայի քրեական օրենսգրքի 177 հոդվածը:

յամբ, տասնհինգ տարին չլրացած անչափահասի նկատմամբ ոչ բռնի սեռական գործողությունները<sup>1</sup>),

- անձի կյանքի ու առողջության դեմ ուղղված տնտնաբերությունների (խոշտանգում կամ բարբարոսական գործողություններ, բռնի գործողությունները, որոնք անզուգույնությամբ առաջացրել են մարդու մահ, բռնի գործողությունները, կամ, որոնք հանգեցրել են անձի խեղման կամ մշտական հաշմանդամության կամ առաջացրել են աշխատունակության լրիվ կորուստ ութ օրից ավելի ժամանակով, կամ աշխատունակության լրիվ կորուստ ութ օր կամ ավելի քիչ ժամանակով, կամ չեն հանգեցրել աշխատունակության կորստի<sup>2</sup>),

- բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների (կավատություն, թափառաշրջիկության շահագործումը<sup>3</sup>) և

- սեփականության դեմ ուղղված երկու հանցագործությունների (գողություն<sup>4</sup>, գույքի ոչնչացում կամ վնասում) դեպքում:

Մեջբերված քրեաիրավական նորմերի համակարգված ուսումնասիրությունը թույլ է տալիս նախանշելու ֆրանսիական քրեական օրենսդրության կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը երկու կամ ավելի անձանց մասնակցության համար առավել խիստ պատիժ սահմանելիս: Մասնավորապես, ինչպես բխում է վերը թվարկված հանցակազմերից, քննարկվող ծանրացնող հանգամանքի նախատեսումը հիմնականում սահմանափակվում է բռնությամբ զուգորդված հանցագործություններով: Բացի այդ, մեր համոզմամբ, օրենսդրի կողմից իրավական նշանակություն է տրվել նաև քննարկվող հանցագործությունների օբյեկտ համարվող հասարակական հարաբերությունների բնույթին, իսկ որպես այդպիսին գերազանցապես հանդես է գալիս անձի ֆիզիկական (այդ թվում սեռական) անձեռնմխելիությունը:

Մեր համոզմամբ, քննարկվող հարցի կապակցությամբ ֆրանսիական քրեաիրավական կարգավորումները հետաքրքրություն են

---

<sup>1</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 222-24, 222-28, 222-30, 227-26:

<sup>2</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 222-3, 222-8, 222-10, 222-12, 222-13:

<sup>3</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 225-7, 225-12-6:

<sup>4</sup> Սրա հետ կապված, հարկ է նշել, որ Ֆրանսիայի քրեական օրենսգրքում գողության հանցակազմը նա կարող է գուգորդվել բռնի գործողություններով (առավել մանրամասն տե՛ս օրենսգրքի հոդվածներ 311-1-ից մինչև 311-4-1):

ներկայացնում նաև այն առումով, որ երկու կամ ավելի անձանց համատեղ մասնակցության՝ որպես արարքի ծանրացնող հանգամանքի դրսևորումները չեն սահմանափակվում միայն համակատարման դեպքերով: Ինչպես ուղղակիորեն բխում է վերը նշված հոդվածների ձևակերպումներից, կոնկրետ հանցանքի համար առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե դա կատարվել է երկու կամ ավելի անձանց կողմից, ովքեր գործել են իբրև կատարողներ կամ հանցակիցներ<sup>1</sup>:

Իսպանիայի քրեական օրենսդրությամբ արարքը համատեղ կատարելու դեպքում առավել խիստ պատասխանատվություն է սահմանված միայն սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ սեռական ոտնձգության և տասներեք տարին չլրացած երեխայի նկատմամբ սեռական շահագործման կամ ոտնձգության համար:

Այսպիսով, ինդոր առարկա ինստիտուտի վերաբերյալ արտասահմանյան երկրների քրեաիրավական կարգավորումների, ինչպես նաև դատական պրակտիկայի և դոկտրինալ մեկնաբանությունների համեմատաիրավական ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կանխորոշելու հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի քրեաիրավական լուծումների ընդհանուր տրամաբանությունը՝ կրիմինալոգիական իրողության հաշվառմամբ: Ուսումնասիրության արդյունքները հիմնականում հանգում են հետևյալին՝

- անգլոսաքսոնական իրավական համակարգում դավադրության՝ իբրև հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի հիմնական կառուցակարգի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն կիրառվում է ինչպես անձանց ոչ կայուն հան-

---

<sup>1</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը, մասնավորապես, օգտագործում է հետևյալ ձևակերպումները «two or more persons acting as perpetrators or accomplices, although not constituting an organised gang» կամ «two or more acting as perpetrators or accomplices»:

Կարծում ենք, որ օրենսդրական նման մոտեցման հիմքում որոշակիորեն ընկած է նաև կրիմինալոգիական իրողությունը: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսդրությամբ այսպիսի կարգավորում նախատեսելու կրիմինալոգիական հիմնավորվածության մասին հետևություններ կարող են արվել այս առնչությամբ դատական պրակտիկայի և համապատասխան վիճակագրության ուսումնասիրության արդյունքների պարտադիր հաշվառմամբ:

ցավոր համաձայնության, այնպես էլ որոշակի կառուցվածք և կայունություն ունեցող հանցավոր խմբերի և կազմակերպությունների (կազմակերպված հանցավորություն) շարունակական գործունեության դեմ պայքարում:

- անգլոսաքսոնական իրավական դոկտրինայում երկու կամ ավելի անձանց հանցավոր համաձայնությանն ինքնուրույն քրեաիրավական գնահատական տալու դատական պրակտիկան հիմնավորող տեսություններից առավել լայն կիրառություն ունի «վաղ կանխման կամ նախականիման» տեսությունը: Մա իր հերթին նշանակում է, որ իրավունքի նախադեպ ստեղծող դատարանների կողմից «խմբային վտանգի» տեսության մոտեցումներից հրաժարումն անտրդակիրեն կանխորոշում է կրիմինալոգիական առումով դրա խոցելիությունը:

- ի տարբերություն դավադրության անգլոսաքսոնական մոդելի՝ մայրցամաքային իրավական համակարգի երկրներում այս ինստիտուտի կիրառման շրջանակները սահմանափակվում են միայն անձանց համատեղ գործունեության այն ձևերով, որոնք չունեն կայունության և կազմակերպվածության հատկանիշներ: Հանցավոր համատեղ գործունեության առավել վտանգավոր ձևերի դեմ պայքարում այս երկրների քրեական օրենսդրության կարգավորումներն ամրագրում են ստացել «հանցավոր ընկերակցությունների» տեսության շրջանակներում:

- հանցանքի կատարումը մեկից ավելի անձանց մասնակցությամբ՝ որպես արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող հանգամանք, ուսումնասիրված եվրոպական քրեական օրենսդրություններում ամրագրված է խիստ սահմանափակ թվով հանցակազմերում՝ պայմանավորված հանցագործության բնույթով և ոտնձգության ենթարկվող իրավական արժեքով:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության ամփոփման արդյունքները թերևս նախանշում են միջազգային քրեական պրակտիկայում առկա մոտեցումները՝ պայմանավորված մի կողմից կայուն հանցավոր համատեղ գործունեության դեմ պայքարի քրեաիրավական գործիքների խստությամբ, մյուս կողմից՝ հանցավոր գործունեության կայունություն չենթադրող, մեկից ավելի անձանց մասնակցության դեմ պայքարի քրեաիրավական լրացուցիչ միջոցների ամրագրման սահմանափակ շրջանակներով:

## **ПРАВОВЫЕ РЕГУЛИРОВАНИЯ И СУДЕБНАЯ ПРАКТИКА ПО БОРЬБЕ С ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТЬЮ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ**

В рамках статьи был проведен сравнительно-правовой анализ передового опыта и судебной практики зарубежных стран по борьбе с групповой преступностью. С целью выявления альтернативных уголовно-правовых решений и криминологических концепций, лежащих в их основе, автором были представлены и изучены как подходы стран континентальной правовой системы, так и англосаксонские правовые модели объекта исследования. В частности, в пределах статьи были выявлены особенности правового регулирования незнакомой отечественному уголовному законодательству концепции «заговора» как оригинального уголовно-правового механизма по борьбе с совместной преступной деятельностью, теории, оправдывающие эту концепцию и основные направления ее развития в судебной практике. Кроме того, автором были рассмотрены особенности применения концепции «заговора» в странах континентальной правовой системы, дифференцированный подход этих государств к борьбе против устойчивых преступных групп, основанный на положениях теории «преступных объединений». Предметом отдельного исследования послужил также анализ пределов правовых регулирований, касающихся закрепления совершения преступления двумя или более лицами как количественного показателя общественной опасности в отдельных составах преступлений, тем самым предпреляя криминологические закономерности этих регулирований.

## LEGAL REGULATIONS AND JUDICIAL PRACTICE OF FOREIGN COUNTRIES IN COMBATING THE GROUP CRIME: COMPARATIVE ANALYSIS

This article is referred to the comparative analysis on the best foreign experience and judicial practice combating the group crime. In order to reveal the alternative legal solutions and the underlying criminological concepts, the author has presented and analysed both the legal approaches of the civil law jurisdictions and the relevant legal models existing in the common law countries. In particular, the study has focused on the features of the concept of conspiracy that is unknown to our criminal legislation, as an original legal mechanism for combating joint criminal activities. Main theories justifying this concept and its development through judicial practice in the common law countries were discussed. Besides, special attention has been drawn to the specificity of the application of the concept of criminal conspiracy in the civil law jurisdiction, the differentiated approach of these countries in combating the criminal gangs and organisations based on the theory of «criminal association rule», as well as the scopes of the prescription of committing crime by two or more persons as a quantitative indicator of public danger in certain crimes, thus outlining the criminological patterns of such legal regulations.

**Բանալի բառեր՝** դավադրության հայեցակարգ, հանցավոր խումբ, հանցավոր ընկերակցություն, հանցավոր համաձայնություն, հանցավոր համատեղ գործունեություն, համեմատադրական ուսումնասիրություն, արտասահմանյան փորձ:

**Ключевые слова:** концепция заговора, преступная группа, преступное объединение, преступное соглашение, совместная преступная деятельность, сравнительно-правовой анализ, зарубежный опыт.

**Key words:** concept of conspiracy, criminal group, criminal association, criminal agreement, joint criminal enterprise, comparative analysis, foreign experience.